
**ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ԱՐԵՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ**

ԱՎԵՏԻՍՅԱՆ Է. Ս.

Դեռևս XIX դ. 90-ական թթ. «կարմիր սուլթան» Աբդուլ Համիդի գլխավորությամբ թուրքերը սկսել էին իրականացնել հայ ժողովրդի և նրա մշակույթի բնաջնջման անմարդկային ծրագիրը: «Ժողովուրդ» հասկացությունը ամբողջական իմաստ ու նկարագիր է ստանում միայն նրա ստեղծած մշակութային արժեքների միասնությամբ: Դա շատ լավ գիտակցում էին թուրք իշխանավորները՝ մարդկային սպանդն ուղեկցելով մշակութային արժեքների վայրագ ոչնչացմամբ:

Անհերքելի է Արևմտյան Հայաստանի հոգևոր-մշակութային, մանավանդ ժողովրդական արվեստի արժեքների ոչնչացման փաստը: Պատմաբան Ստեփան Պողոսյանը գրում է. «Օսմանյան կայսրությունում հայկական հուշարձանները հիմնականում ոչնչացվել են երկու շրջանում՝ 1880-1900 և 1914-1923 թվերին»¹: Համաձայն լինելով այդ կարծիքին՝ նկատենք, որ մշակութային եղեռնը շարունակվեց և իրագործվեց նաև մեր օրերում: Հայկական մշակութային արժեքները ոչնչացվում են առ այսօր, այն էլ՝ հզոր տերությունների աչքի առջև:

Մինչև 1960-1980-ական թթ., թեև կիսավեր, դեռ կանգուն էին հայկական ճարտարապետության որոշ կոթողներ²: Այսօր արդեն խոնարհված են (լրիվ ավերված կամ կիսավեր են) Տեկորի տաճարը՝ հայկական առաջին գմբեթավոր բազիլիկ եկեղեցին, Աղբակի Ս. Բարդուղիմեոսը՝ քանդակագործական արվեստի բացառիկ, ինքնատիպ նմուշներով, Վարագա վանքի Ս. Գևորգ ժամատունը, որի որմնանկարները նոր խոսք էին ուղ միջնադարյան հայ արվեստում: Ի դեպ, այստեղ բնական մեծությամբ ներկայացված է առասպելական Արգար թագավորը՝ ձեռքին բռնած անձեռակերտ դաստառակը, որտեղ դրոշմված էր Հիսուս Բրիստոսի ամենահին պատկերագրական տիպը: Ս. Գևորգ ժամատանը կարելի էր հանդիպել մեծ չափերով նկարված Հռիփսիմե և Գայանե կույսերին, Թեոդորոս զորավարին, հայոց հոգևոր հայրերին:

¹ Հայկական հարց, Ե., 1996, էջ 28:

² **Thierry M.** *Le Convent de Varacavan (Revue des études Arméniennes, Paris, 1969, p. 152-160)*: Նույն հանդեսի 1965-1967 թթ. համարներում Միշել և Նիկոլ Թիերիներն անդրադարձել են Աղբակի Ս. Բարդուղիմեոս և Ս. Հակոբ եկեղեցիների վիճակին:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն դառնալուց հետո (301 թ.), ողջ երկրում հիմնվում են վանական հաստատություններ³, ինչպես նաև աշխարհիկ կառույցներ: Ղ. Բնձիճյանը նշում է շուրջ 2500 մեծ ու փոքր վանք⁴: Մոտավորապես նույն թիվն է մատնանշում նաև Հ. Ոսկյանը⁵: Իհարկե, այդ թվերը կարող են փոքր-ինչ ավելին կամ պակաս լինել: Բոլոր դեպքերում, թվում է, որ հայոց բովանդակ աշխարհում ամենից շատ մշակութային հուշարձաններ ստեղծվել են Վասպուրականում, որը և 1915-ին դարձավ ոճիրների իրագործման հիմնական վայրը:

Հինավուրց և ընդարձակ այդ նահանգում կառուցված վանական շինություններից մի քանիսն աստիճանաբար լայն ճանաչում են ձեռք բերում՝ դառնալով համազգային հոգևոր կենտրոններ: Այդպիսիք են Աղթամարի Սուրբ Խաչը, Վարագավանքի համալիրը, Աղբակի Սուրբ Բարդուղիմեոսը, Հոգյաց վանքը, Արտազի Սուրբ Թադեոսը, Լիմի Սուրբ Գևորգը և այլն: Այդ հոգևոր կենտրոնները՝ եկեղեցիներ, ժամատներ, զանգակատներ ճարտարապետական հուշարձան լինելով հանդերձ, ունեն կամ կրում էին նաև գեղարվեստական հարուստ համակարգ՝ հարթաքանդակներ, որմնանկարներ, առավել ևս՝ դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, որոնց ճակատագիրն էլ տվյալ դեպքում մեր հետաքրքրության առարկան է:

Մեծ եղեռնի ու Հայ դատի մասին խոսելիս մեր ուշադրությունը առաջին հերթին ուղղվում է աննախադեպ ոճրագործությանը՝ մեկ ու կես միլիոն հայերի եղերական նահատակությանը: Երևի այդ մեծ ողբերգության ծանր տպավորության տակ ինչ-որ չափով երկրորդ պլան է մղվել դարերի ընթացքում ստեղծված բազմաթիվ հուշարձանների ավերման փաստը: Անշուշտ, դա կորուստ է ոչ միայն մեկ ժողովրդի, այլև ողջ քաղաքակիրթ աշխարհի համար:

Անդրադառնանք մի քանի հուշարձանների ներկա վիճակին, որոնք Մեծ եղեռնից հետո բացարձակ անտարբերության, ավելի շուտ՝ միտումնավոր վերաբերմունքի հետևանքով ավերվել են, ու միայն նրանց մասունքներն են մնացել:

1915-ին ավերված նշանավոր կոթողներից մեկը Ապարանից Ս. Աստվածածնի վանքն է, համանուն գյուղի մոտ: Այն քիչ է հայտնի արվեստասեր հասարակությանը: Գտնվում է Վանա լճից հարավ-արևմուտք,

³ Հայտնի է, որ քրիստոնեության ընդունման արշալույսին հոգևոր կառույցների մեծ մասը ստեղծվում էր հին պաշտամունքային կենտրոնների տեղում:

⁴ Բնձիճեան Ղ., Մոտրագրություն հին Հայաստանեայց Վենետիկ, 1822, էջ 160:

⁵ Ոսկեան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. Ա, Վիեննա, 1940, էջ 10: Նույնիսկ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող միջնադարյան հուշարձաններից շատերը հայտնի դարձան ընդամենը 50-60 տարի առաջ. Գառնիի բաղնիքի հատակի խճանկարները՝ 1953 թ., Աստղիկ աստվածուհու արձանը՝ 1971-ին, Աղցի Արշակունյաց թագավորների դամբարանը՝ 1973-1974 թթ., Լմբատավանքի որմնանկարները՝ 1952-ին և այլն:

Բիթլիսի վիլայեթում: Լեռնային դժվարամատույց այդ վայրում մինչ եղեռնը բնակվել է շուրջ 500 մարդ: Կոտորածներից փրկվեց մի փոքր մասը, որը հանգրվանեց Արևելյան Հայաստանում:

Ապարանից վանքը լայն ճանաչում է ստացել X-XI դդ., եղել է Մոկաց աշխարհի եպիսկոպոսանիստ աթոռը: Հատկապես փառավոր էր Ս. Աստվածածնի եկեղեցին⁶: Բյուզանդական Վասիլ II կայսրը⁷ ոսկեհուռ ձուլածո մի շքեղագարդ խաչ է նվիրել այդ եկեղեցուն, որտեղ պահվել են սուրբ մասունքներ՝ մի-մի կտոր կենաց ծառից, Աստվածածնի հանդերձանքից և այլն՝ «...վայելուչ կերպով ամփոփված ճարտարագործ երկու դռնով տապանակի մեջ»⁸:

Ս. Աստվածածնի եկեղեցու գեղարվեստական հարդարանքն իր հարստությամբ և ճոխությամբ կարող է համեմատվել Գագիկ Արծրունու հպարտությունը հանդիսացող Աղթամարի Սուրբ խաչ տաճարի հետ⁹: Ս. Աստվածածնի որմերը ներսից ամբողջովին ծածկված են եղել նկարներով, իսկ արտաքին կողմից՝ բազմապիսի քանդակներով: «Եկեղեցու փառավորությունը, - գրում է Ս. Էփրիկյանը, - և գեղեցկությունը քանդակներու, նկարներու, մանր բանուածքներու... զգեստեաց և սպասուց նկարագիրը

⁶ XVI-XVII դդ. հայտնի են այդ վանքում ընդօրինակված ու նկարագրված բազմաթիվ ձեռագրեր: Վանքն ունեցել է հարուստ գրադարան, որտեղ ուսումնասիրության եռանդուն գործունեություն է ծավալվել: Քրիստոնեական մշակույթի այս նշանավոր կենտրոնը մեծապես տուժեց 1895-1896 թթ., սակայն վերջնականապես լքվեց և ավերվեց 1915-ին: Մասնագիտական գրականության մեջ այն մեծ մասամբ հիշատակվել է որպես ճարտարապետական կառույց:

⁷ Այդ Վասիլիին պետք չէ շփոթել Բյուզանդիայում կայսերական մակեդոնական դինաստիայի հիմնադիր, հայազգի Վասիլ I-ի հետ (867-886 թթ.): Հավանաբար, խոսքը Վասիլի I-ի թոռան՝ Վասիլ II-ի (957-1025) մասին է: Այս փաստը կողմնակիորեն վկայում է, որ բյուզանդական հայազգի կայսերը ինչ-որ չափով հովանավորչական կապեր են պահպանել իրենց նախնիների հայրենիքի հետ:

⁸ Ոսկեան Հ., նշվ աշխ., էջ 232-235: Ուշագրավ է, որ 1967 թ. Թալինի շրջանի Արեգ գյուղում Արևմտյան Հայաստանի Մուշ նահանգից գաղթած մի ընտանիքում առ այսօր պահպանվում է արծաթյա ոսկեզոծ խաչատուփ՝ ամբողջովին պատված հյուսկեն գարդերով: Տուփի մեջ, ըստ ավանդության, տեղադրված են քրիստոնեական մասունքներ: Տանտերը պատմում է, որ այդ տուփը, ինչպես նաև մի քանի ձեռագրեր և հմայիլներ, իր հոգևորական պապը 1915 թ. գաղթի ժամանակ բերել է Մուշից: Բհարկե, այս թանկարժեք տուփը XVII-XVIII դարերից է և որևէ կապ չունի Վասիլ II-ի ուղարկած խաչատուփի հետ:

⁹ Նույնիսկ ճարտարապետական առումով այստեղ զուգորդություններ կան՝ եկեղեցու խաչաձև հատակագիծը, վիթխարի կաթողիկեն, դրսից սրբատաշ քարերը (այդ մասին տե՛ս Բյուզանդիոն, 1904, N 125/2294, Լուսնայ, գրական հանդես, V տարի, 1900, Ա, էջ 222): Եկեղեցին ունեցել է գեղեցիկ զանգակատուն:

մանրամասն ըրած է Գրիգոր Նարեկացին»¹⁰: Ըստ ամենայնի, սա երկրորդ Աղթամար է եղել, որի մասին առայժմ սահմանափակ գիտելիքներ ունենք: Կարևոր են հայոց ազգային հանճարի հաղորդած տեղեկությունների որոշ մանրամասներ: Գրիգոր Նարեկացին 983 թ. հրավիրված է եղել եկեղեցու բացման հանդիսավոր արարողությանը և նկարագրական անգնահատելի տողեր թողել այդ կոթողի մասին. «Եւ զարտաքին որմոցն զարձանս մաքրապար տեղոյն բերկրութեան՝ ճառագայթանշոյլ բեհեզատիպ զգեստութն պճնեաց: ... Իսկ զդիմաց դրանդեացն դիրս սքանչելի քանդակագործեալ քառաշուրթն, զարմանազան, իբր զծաղկեղէն զգեստաց հանդերձանս սրբաբեհեզն պատմուճանի առագաստանուէր գեղապանձ հարսինն ի զուխ ծայրից լրութեան թեզանեաց շրջապարուրեաց: Իսկ զդրունցն երեսաց տիպ՝ նկարակերտ յանգուածատաշեալ կարմրերփեան փայտիւք եւ փղաց ոսկերաւք»¹¹:

Նարեկացին որոշակիորեն շեշտում է եկեղեցին ճոխացնող «կարմրերփեան փայտի» և «փղոսկրե» (փղաց ոսկերաւք) իրերի մասին: Դրանք եզակի տեղեկություններ են հայկական դեկորատիվ-կիրառական արվեստների մասին, որոնք, մինչ այժմ, հատուկ ուշադրության չեն արժանացել: Նարեկացու ակնարկած «կարմրերփեան փայտը» Աֆրիկայում աճող թանկարժեք երենոսի ծառ է, որը շատ ավելի ամուր է, քան կաղնին: Այդ ծառի փայտն ունի կարմրավուն տեսք, որը մշակելուց հետո աստիճանաբար մգանում է: Աֆրիկացիները դրանից պատրաստում են ծիսական և կիրառական բնույթի առարկաներ (մեզ ծանոթ են զբոսաշրջիկների կողմից բերվող դիմակները): XIX-XX դ. երենոսի փայտից Եվրոպայում պատրաստել են թանկարժեք դաշնամուրներ: Հայ միջնադարյան արվեստում հայտի է XV դարում երենոսի փայտից պատրաստված սքանչելի մի հուշարձան Եվդոկիայի Ս. Հովակիմ-Աննա վանքի դուռը, որի մասին կխոսենք ստորև:

Սսենք, որ XVII դ. վերանորոգման աշխատանքների ժամա-նակ փոխվել է Ապարանից վանքի Ս. Խաչ եկեղեցու հին դուռը: Նոր դռան ճակատին եղել է հետևյալ արձանագրությունը. «Թուականին քսան եւ մի յօբելեան եօթ քառեակ հուրեակ (1638 թ.) ի նմին, նորոգեցաւ դուռն Սուրբ խաչին ձեռամբ Լուճ վարդապետին»¹²:

Ինչ վերաբերում է «փղաց ոսկերաւք»-ին նշենք, որ փղոսկրից պատրաստած հայկական ամենահին, առայժմ դեռևս միակ հուշարձանը VI դարից է: Խոսքը «Էջմիածնի ավետարանի» փղոսկրյա կազմի մասին է՝ լավագույնն իր տեսակի մեջ ողջ

¹⁰ Տե՛ս Գրիգորի Նարեկայ վանից վանականի պատմութիւն Ապարանից Ս. Խաչին (Մատենագիրք հայոց, ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացին, Անթիլիաս - Լիբանան, 2008, էջ 913-929):

¹¹ Նույն տեղում, էջ 922:

¹² Ոսկեան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. Գ., Վիեննա, 1947, էջ 822-826:

համաքրիստոնեական արվեստում: Հիշյալ փղոսկրյա կազմի վրա հայ վարպետները մեծ հմտությամբ փորագրել են ավետարանական 14 պատկեր: Խոշոր միջնադարագետ Հովսեփ Ստրժիգովսկին, որն առաջինը հանգամանորեն ուսումնասիրեց «Էջմիածնի Ավետարանը», այն կարծիքն է հայտնել, որ այդ կազմը գնվել է Ասորիքում կամ Հնդկաստանում և բերվել Հա-յաստան՝ համապատասխան օգտագործման համար¹³: Կարծես թե հայ վարպետները չէին կարող փղոսկրի վրա աշխատել: Միայն հայ արվեստագիտության պատմության նահապետ Սիրարփի Տեր-Ներսեսյանը 40-ական թվականներին ապացուցեց, որ դա հայ վարպետների ձեռքի ու մտքի արդյունքն է¹⁴: Ահավասիկ, Գրիգոր Նարեկացու թանկարժեք վկայությունը հստակություն է մտցնում մեր հուշարձանների պատկանելության խնդրում: Դեռ վաղ միջնադարից՝ (X դ.) հայկական եկեղեցիներում (չի բացառվում նաև թագավորական ու իշխանական տներում), օգտագործվել են փղոսկրե իրեր: Ինչպես այսօր, հին ժամանակներում ևս վարպետները դրսից ձեռք էին բերում փղոսկրը և տեղում պատրաստում անհրաժեշտ իրեր:



Ձեռագրի կազմ, արծաթ-ոսկեջրած, XVII դ.

¹³ Ստրիժիգովսկի Հ., *Էջմիածնի Ավետարանը*, Վիեննա, 1892:

¹⁴ Տեր-Ներսեսյան Ս., *Հայ արվեստը միջնադարում*, Ե., 1975:

Գրիգոր Նարեկացին մանրամասն նկարագրում է նաև եկեղեցական ծիսական սպասքները՝ խնկամաններ, յուղամաններ, բուրվառներ, մոմակալներ, մասանց տուփեր, որոնք ամբողջովին ժողովրդական արվեստի նմուշներ են: Ցավոք, դրանք ևս անհետացել են «թուրքի անցած ճանապարհին»:

Այժմ վերն ակնարկած դրան մասին. Եվդոկիայի Ս. Հովակիմ-Աննա վանքի գլխավոր մուտքի դուռը պատրաստվել է 1479 թ. երենոսի կարմրավուն փայտից: Դա իր տեսակի մեջ եզակի է եղել մեզանում: Դրան մասին միակ տեղեկությունը հաղորդում է Ներսես Ալիինյանը¹⁵:

Դուռը երկփեղկ է: Յուրաքանչյուր փեղկի վրա համաչափ դասավորությամբ ներկայացված են մի քանի պատկերախումբ: Դրան վերին և վարի մասերում վարպետի փորագիր հիշատակությունն է. «Թուին Հայոց ՋԻԸ կազմեցաւ դուռնս Տաճարիս յիշատակ Տէր Գրիգոր արքեպիսկոպոսի և Կարապետ... որ եղև պատճառ շինութեան Սբ. եկեղեցոյս և այլ երախտատրաց հայոց ազգիս և միաբանիցս և աշխատողացն: Ձեռամբ անարուեստ Յակոբ վարդապետի Երուսաղէմացոյ շինեցաւ»¹⁶:



Կնոջ գոտի, արծաթ-ոսկեջրած, XVIII դ. երկրորդ կես

Հիշատակությունից ներքև ձգվում է հորիզոնական լայն ժապավենազարդը, որը հիշեցնում է Աղթամարի եկեղեցու (915- 921 թթ.) միջին գոտու որթագալարակը: Հյուսածո գալարակների ներսում բուսական զարդեր են: Հաջորդ հատվածում, պարանահյուս եզրագարդերի մեջ տեղավորված են չորսական շրջանակներ՝ հայկական արվեստին բնորոշ հավերժության

¹⁵ Հանդէս ամսօրեայ, 1961, N 12, էջ 963:

¹⁶ Նույն տեղում:

պտույտամտիվներով ու զանազան ծաղկահյուսվածքներով: Փեղկերի կենտրոնական մասում լայն, քառանկյուն շրջանակի մեջ պայտաձև կամարներ են՝ հյուսածո գեղեցիկ խաչապատկերներով: Ավելի ցած, ողջ հատվածը զբաղեցնում է մեծ վարդակազարդը, մի մոտիվ, որը միջնադարյան արվեստի հմուտ գիտակ, ակադ. Վ. Լազարևը բնութագրել է որպես «հայկական վարդակ»: Այն հաճախ է հանդիպում հայ միջնադարյան արվեստի հուշարձաններում, մանավանդ ձեռագիր մատյանների թերթերում: Ի դեպ, դրան կենտրոնական հատվածի այդ խումբը, կամարի ներսում ամփոփված հյուսածո խաչը և մեծ գեղազարդ գրեթե առանց փոփոխության, պատկերվում են հայկական խաչքարերի վրա (Կոշի՝ 1175 թ., Սանահինի՝ 1184 թ., Մաստարայի՝ 1211 թ., Մաղմուսավանքի՝ XIV դ.): Իսկ Եղեզնաձորի (XIII դ.) խաչքարերից մեկը, ուր նշված մոտիվներից բացի, ներքևում կա նաև փորագրող վարպետի հիշատակագրությունը, կարծես անմիջական նախատիպ ծառայած լինի Եվդոկիայի դրան համար: Հորինվածքային նման կառուցվածք մենք տեսնում ենք նաև Տաթևի վանքի դրան վրա: Անշուշտ, հիացմունքի է արժանի այն իրողությունը, որ մայր Հայաստանից հեռու գտնվող քաղաքներում (Երուսաղեմ. Եվդոկիա) ապրող հայ վարպետը քաղաքական ծանր պայմաններում այդքան հոգեհարազատ ու հավատարիմ է մնացել ազգային մշակույթի ավանդույթներին: Ինչպես մեր խաչքարերի, տաճարների ասեղնահյուս գարդաքանդակների հեղինակները, մեր մագաղաթյա մատյանների հրաշք ծաղկողները, Հակոբ վարդապետը ևս աշխատել է ամեն մի փոքրիկ հատվածում, ամեն մի մանրամասում ստեղծել ինքնատիպ ու հաճելի նախշազարդ՝ հարուստ հայ վարպետներին հատուկ երևակայությամբ: Եվդոկիայի եկեղեցու գարդաքանդակները իրավամբ հայկական-ազգային գարդամոտիվների մի գողտրիկ փունջ են: Բհարկե, լուսանկարը հնարավորություն չի տալիս խորանալու վարպետ Հակոբի աշխատանքի նրբությունների ու առանձնահատկությունների մեջ, թեև նկատվում են կատարման հմտությունն ու փայտե մակերեսի մշակման նուրբ զգացողությունը:

«Այս դուռը, - գրում է Ակինյանը, - իր արժեքը կը պահե ոչ միայն իբրև նշխար մը պատմական օրերու, կամ իբրև յիշատակը մեր պատմութեան... այլ մանաւանդ իբրև մէկ լավագոյն նմոշը հայկական քանդակագործութեան արուեստին կարծր փայտի վրայ: Անոր ձեւերու եւ գծերու, ծաղիկներու նկարներու ակնհասձոյ ներդաշնակութիւնը, որ առանց արուեստակեալ խճողումի գեղարուեստի վայելքը կու տայ նայուածքին, կազմուած է իրապէս իրարու աննման պատկերախումբերով: Այն կը ներկայացնէ ամենայայտօղ մէկ արտադրութիւնը զուտ հայկական արուեստի»¹⁷:

Ժողովրդական արվեստի սրանչելի մի նմուշ է եղել Վարագավանքի Ս. Աստվածածին եկեղեցու կենտրոնական մուտքի դուռը: Այն կարող է համեմատվել Երևանի պատմության ազգային թանգարանում պահվող Մշո (1134 թ.) նշանավոր դրան հետ: Ողջ մակերեսը ծածկված է եղել նուրբ

¹⁷ Հանդէս ամսօրեայ, 1961, N 12, էջ 963:

զարդափորագրություններով, նույնիսկ թեմատիկ տեսարանների առանձին փոքրիկ հատվածներով: Բարեբախտաբար, 1910-1912 թթ. Վոլտեր Բախմանը լուսա-նկարել է այդ դուռը, և այդ կերպ գոնե պահպանվել է փայտի գեղարվեստական փորագրության այդ եզակի հուշարձանի պատկերը¹⁸: Մ. Տեր-Մովսեսյանը այդ դուռը համեմատել է Տաթևի վանքի 1253 թ. փայտե զարդարուն դռան հետ¹⁹: Դռան մասին հիացմունքով է խոսել աշխարհում շատ բան տեսած Լինչը²⁰: Ավաղ, այդ դուռը ևս կորստյան մատնվեց: Ի դեպ, նշենք չափազանց հետաքրքրական մի փաստ. 1895 թ., երբ Խրիսյան Հայրիկը այցելել է Թեոդոսիա, մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն, վերջինիս մորեղբոր որդու՝ Լևոն Մազիրյանի հետ Թեոդոսիայի Մ. Սարգիս եկեղեցում հետաքրքրությամբ ծանոթացել են Անի քաղաքից բերված և այս եկեղեցում պահվող քանդակազարդ դռների²¹: Ցավոք, մեր պատմագագագրական և արվեստագիտական գրականության մեջ չենք հանդիպել որոշակի տեղեկությունների նշված հուշարձանների մասին: Ե՛րբ են ստեղծվել, Անիի ո՞ր եկեղեցիների համար. պարզ է միայն, որ փրկելու համար բերվել են Ղրիմ: Գուցե հետագա ուսումնասիրությունները պարզություն մտցնեն այս հարցում:



Պատկերազարդ վարագույր, XVIII դ. այժմ տեղը անհայտ է

Վարագավանքի վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ են

¹⁸ Bachmarn W. *Kirchen und Mosctheen in Armenien und Kurdistan*, Leipzig, 1913, fig. 30.

¹⁹ Տեր-Մովսեսյան Մ., *Հայկական երեք մեծ վանքերը*, Երուսաղեմ, 1938, էջ 12-14:

²⁰ Линч X. Ф. *Армения, т. II, Тифлис, 1910, с. 146.*

²¹ Նոր դար, 1895, N 119:

հաղորդում մատենագրական աղբյուրները: Որոշ փաստերի վկայությամբ, դեռևս X դ. այստեղ է գտնվել Սուրբ Աստվածածնի փայտակերտ քանդակը՝ բացարձակապես եզակի օրինակ հայկական միջնադարյան արվեստում: Դրա հետագա ճակատագրի մասին ունենք հետևյալ տեղեկությունը՝ «հայրն Վարագայ Պաղոսը այդ արձանը իր հետ տանում է Ուտհայ»²². այն այժմ անհետ կորած է:

Մի առանձին խումբ են կազմում այդ չարաշունչ օրերին ոչնչացված հայկական ձեռագիր-մատյանները: Ինչն է առավել տխուրը, էթե չասենք՝ ողբերգականը: Ճարտարապետական հուշարձաններից, որմնանկարներից, քանդակներից գոնե ինչ-որ բան, թեկուզ վնասված, մնում է, դրանց մասին գրականության մեջ հանդիպում են նկարագրություններ, տպավորություններ, ընդօրինակություններ կամ լուսանկարներ (հիշենք Նարեկացու նկարագրությունները Ապարանից Ս. Աստվածածնի եկեղեցու, Վարագայ վանքի և Եվդոկիայի եկեղեցիների քանդակագարդ դռների, Անիի՝ Գագիկ թագավորի կանգնած արձանի, Ռշտունիքի Ս. Հակոբ եկեղեցու ավերակներում հայտնաբերված որմնանկարների մնացորդների մասին և այլն): Ձեռագիր-մատյանների ճակատագիրը միանգամայն այլ է. հատկապես մինչև XX դ. 20-30-ական թթ., երբ հայկական ձեռագրերի մեծ մասը նկարագրված ու ցուցակագրված չէր, կորուստները անդառնալի էին լինում ամեն ինչով: Դատապարտող փաստի ուժ ունեն ակադ. Ն. Մառի գեկուցագրերը Արևմտյան Հայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին: Ահա թե ինչ է հաղորդում մեծանուն գիտնականը. «Ես ստիպված եմ գիտաժողովի ժամանակը զբաղեցնել մի հարցով՝ մի շատ տխուր ելույթով, այն է՝ Վան քաղաքում ու նրա շրջակայքում հնագիտական մեծ արժեք ներկայացնող հարյուրավոր, հնարավոր է՝ նաև հազարավոր ձեռագրերի ոչնչացմամբ...», «պատմական հուշարձանների պաշտպանության դիրքերից հանդես եկող որևիցե կազմակերպության բացակայությունը խիստ անպաշտպան վիճակում թողեց երկրամասի ձեռագրերի հավաքածուները, որոնք դարձան բարբարոսների ոչնչացման բաժինը... ավելի հաճախ՝ տգետ գիշատիչներին»:

«Մի եկեղեցում, - գրում է Ն. Մառը, - պարոն Ալեքսանդր Ֆլորենսկին տեսել է դիակների կույտեր ու մոտ երեք հարյուր ձեռագիր»²³: Մի այլ առիթով նույն պարոն Ա. Ֆլորենսկին պատմում է. «Պելու գյուղի ճանապարհին, որ թուրքերն էին ավերել, նկատեցի եկեղեցի, որի շուրջ բոլորը թափված էին պատառոտված ձեռագրեր»²⁴:

Ձեռագիր-մատյանի ստեղծումը անմիջականորեն կապված էր հայ վարպետների տրնաջան աշխատանքի հետ՝ մագաղաթ մշակել, թուղթ կոկել, ձեռագիրը կապել...: Ժողովրդական արվեստի յուրօրինակ դրսևորում էր նաև կազմարվեստը: Յուրաքանչյուր ձեռագրի կազմը՝ արհեստավորի ձեռքի

²² Ոսկեան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 291:

²³ Անի, Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական - հասարակական եռամսյա հանդես, 1992, N 4, էջ 3-7:

²⁴ Նույն տեղում:

աշխատանքի արդյունքն է: Նույնիսկ սովորական կաշվե կազմերն իրենց վրա ունեցել են մետաղե, հաճախ արծաթյա զարդակտորներ՝ հրեշտակների և առանձին սրբությունների պատկերներով: Որոշ ընտիր ձեռագրեր ամփոփված էին արծաթ ու ոսկյա կափարիչներով, նաև թանկարժեք քարերով կազմերի մեջ: Այդ կազմերը ևս քաղաքակրթությունից շատ հեռու գտնվող գողերի ու ավազակների բաժին դարձան:

**ГЕНОЦИД АРМЯН И СУДЬБА ОБРАЗЦОВ НАРОДНОГО ТВОРЧЕСТВА
ЗАПАДНОЙ АРМЕНИИ**

АВETИСЯН Э. С.

Резюме

Геноцид армян сопровождался также уничтожением культурных ценностей, являющих собой образцы народного творчества, к числу которых относится церковная утварь из золота, серебра и слоновой кости монастыря Сб. Аствацацин (Св. Богородицы) в Апаране, украшенная резьбой дверь из эбенового дерева монастыря Св. Иоакима и Анны из Евдокии и др.

**THE ARMENIAN GENOCIDE AND THE DESTINY OF THE NATIONAL
MONUMENTS IN WESTERN ARMENIA**

E. AVETISYAN

Abstract

The unity of a nation implies unity of the cultural values it created. Being well aware of it, the Government of Young Turks made part of their massacres the vandalistic destruction of Armenian incomparable cultural values. Thousands of pieces of folk arts were destroyed.

This paper addresses some masterpieces of international importance which were destroyed during the Armenian Genocide of 1915 and the preceding massacres of 1894-1896. These pieces include the gold, silver and ivory sacred vessels of the Holy Cross church in Aparan, the carved door of St. Stepanos church in Varagavank, the painted door made of ebony in the St. Hovakim-Anna of Eudocia monastery and many others.